ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 473-Ա

ՆԱՐԵ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԵՎ ՍՈՒՐԵՆ ՔԵՍԵՋՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N2335-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Նարե Ղազարյանին և մարզպետի խորհրդական Սուրեն Քեսեջյանին 5 օրով՝ 2024 թվականի նոյեմբերի 19-ից 23-ը գործուղել Ֆրանսիայի Հանրապետության՝ «Օվերնյ-Ռոն-Ալպեր Հայաստան Սյունիք բարեկամության օր» միջոցառմանը մասնակցելու նպատակով:
2. Ֆինանսական վարչությանը՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմին հատկացված միջոցների հաշվին, իսկ գիշերավարձի ծախսերը կատարել համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի:
3. Ֆինանսական վարչությանը՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

2024-11-18 12:31:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. նոյեմբերի 18
ք. Կապան